ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

2 մարտի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

31
(2697)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 166

Կառավարությունը շարունակում է արտաքին անվտանգության ապահովումը համարել առանցքային մարտահրավեր: Այս մասին նաեւ նշված է ՀՀ կառավարության ծրագրի (2021-2026թթ.)՝ 2022 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին զեկույցում: 2022 թվականն ամփոփվել է 12,6% տնտեսական աճով: Զեկույցում ներկայացված են տվյալներ նաեւ սեպտեմբերյան ագրեսիայի մասին. ագրեսիայի հետեւանքով հայկական կողմն ունեցել է 225 զոհ, այդ թվում՝ քաղաքացիական 3 անձ, վիրավորվել է 293 զինծառայող եւ քաղաքացիական 7 անձ, գերեվարվել է 20 զինծառայող: 2021 եւ 2022 թվականների ընթացքում Հայաստանի դեմ իրականացրած ագրեսիաների հետեւանքով Ադրբեջանն օկուպացրել է ՀՀ ինքնիշխան տարածքի ավելի քան 150 քառակուսի կիլոմետր հատված: Զեկույցի մեջ անվտանգության ապահովումը՝ որպես մարտահրավեր, ոչ մեկ անգամ է նշված: Սա նշանակում է, որ իշխանությունները եւս խոստովանում են, որ 2018 թվականից ի վեր չեն կարողանում ապահովել Հայաստանի եւ հայ ժողովրդի անվտանգությունը, եւ սա՝ այն դեպքում, երբ Նիկոլ Փաշինյանն ամեն առիթով հայտարարում էր. «Կեցցեն մեր երեխաները, որ ապրում են եւ ապրելու են ազատ եւ երջանիկ Հայաստանում»: Փաստացի այսօր ոչ ոք չի ապրում ազատ, երջանիկ կամ անվտանգ Հայաստանում, այսինքն՝ այս խոստումը եւս չկատարվեց, գուցե՝ անհաղթահարելի երեւույթների հետեւանքով, բայց փաստը փաստ է:

ՔՊ-ական պատգամավորները որոշել են ամեն շաբաթ խորհրդարան կանչել նախարարներից կամ ուժային կառույցներից որեւէ մեկին՝ փակ քննարկման: Այս ընթացքում խորհրդարան են եկել ՊՆ նախարար Սուրեն Պապիկյանը, ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը, երեկ էլ ԱԺ էր եկել ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը: Հնարավոր է՝ առաջիկայում ՔՊ-ականների հետ փակ հանդիպման գա նաեւ Արարատ Միրզոյանը: ՔՊ-ական պատգամավորներին «հրահանգվել է» մեկ մարդու պես գալ ու ներկա լինել այդ բոլոր հանդիպումներին: Մեր տեղեկություններով՝ այս հանդիպումներին թեեւ «հույժ գաղտնի» հարցեր չեն քննարկվում, բայց ՔՊ-ականները փորձում են ամեն կերպ փակ պահել հանդիպման մանրամասները: Այս հանդիպումները տեղի են ունենում հիմնականում հարցուպատասխանի ձեւով. իշխող ֆրակցիայի պատգամավորները հարցեր են ուղղում նախարարներին, երբեմն նաեւ «ուղղորդումներ» են տալիս:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովը պատրաստվում է ԳՇ պետ Էդվարդ Ասրյանին լսելուց հետո հանձնաժողով հրավիրել ԳՇ նախկին պետերին: Ստացվում է, որ առաջիկայում հանձնաժողով պետք է ներկայանան ԳՇ նախկին պետ, ներկայումս անորակ հրթիռների գործով մեղադրյալ Արտակ Դավթյանը, ԳՇ նախկին պետ Օնիկ Գասպարյանը: Ի դեպ, մեզ հասած լուրերի համաձայն՝ ԳՇ նախկին պետերին լսելուց հետո գործը կհասնի պաշտպանության նախարարներին: Այստեղ հանձնաժողովում հարց է բարձրացվել նաեւ 44-օրյա պատերազմի ժամանակ նախարար եղած Դավիթ Տոնոյանի մասին, որը կալանքի տակ է. հարց է հնչել՝ ինչպե՞ս պետք է լուծել նրան ԱԺ կանչելու հարցը: Մեր տեղեկություններով՝ որոշվել է, որ հանձնաժողովը կգնա «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ կամ բոլորին հայտնի «ԿԳԲ-ի պադվալ», թեեւ քննիչը արգելանք է դրել նրա բոլոր տեսակցությունների վրա: Հիշեցնենք, որ Անդրանիկ Քոչարյանի ղեկավարած՝ 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող հանձնաժողովն օրերս կենդանության նշաններ ցույց տվեց: Մեկ տարի առաջ ստեղծված հանձնաժողովը միայն օրերս առաջինը հանձնաժողով հրավիրեց Զինված ուժերի ԳՇ պետ Էդվարդ Ասրյանին: Նա պատերազմի ժամանակ զբաղեցնում էր ԳՇ օպերատիվ գլխավոր վարչության օպերատիվ վարչության պետի պաշտոնը: Նշենք՝ առաջիկայում «ԱԺ կանոնակարգ»-ում փոփոխություն է կատարվելու, ըստ որի՝ հանձնաժողով չներկայացողներին պատասխանատվության կենթարկեն:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Մարիամ Պողոսյանը վերջերս նշանադրվել է նույն իշխանական խմբակցության պատգամավոր Մաթեւոս Ասատրյանի օգնականի՝ Ռոման Տերտերյանի հետ: Վերջինս նախկինում ազգությամբ ռուս պատգամավոր Ալեքսանդր Սանդիկովի օգնականն էր: Հատկանշական է, որ Մարիամ Պողոսյանը եւս նախկինում եղել է պատգամավորի օգնական. Նա «Իմ քայլը» խմբակցության ղեկավար Լիլիթ Մակունցի օգնականն էր եւ այս գումարման խորհրդարանում պատգամավոր դարձավ: Մեր տեղեկություններով՝ Մարիամ Պողոսյանը եւ Ռոման Տերտերյանը բավականին երկար ժամանակ է, ինչ ընկերություն էին անում, իսկ վերջերս արդեն նշանադրվել են: Զույգը մտադիր է այս տարի ամուսնանալ, եւ երեկ արդեն միասին ծաղիկներ էին խոնարհում մարտի 1-ի զոհերի նորադիր արձանի մոտ:

ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

# ՊԵՏՔ ՉԷ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՄԵՂԱԴՐԵԼ

**Հոկտեմբերի 20-ից Հայաստանում իր գործունեությունն է սկսել ԵՄ դիտորդական առաքելությունը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանը նշեց՝ ակնկալում է, որ այս դիտորդական առաքելությունը կնպաստի, որպեսզի հայ-ադրբեջանական սահմանին իրավիճակը կայունանա:**

Մեզ հետ զրույցում պատգամավորն անդրադարձավ նաեւ ռուսական կողմի կոշտ հայտարարություններին՝ ԵՄ դիտորդական առաքելության մասով՝ նկատելով, որ Ռուսաստանը մինչ այս կամ չի արձագանքել ՀՀ տարածքի նկատմամբ ադրբեջանական ագրեսիային, կամ էլ ոչ բավարար արձագանք է տվել:

**-Տիկին Ջուլհակյան, ի՞նչ սպասումներ կան այս առաքելության գործունեությունից, որքանո՞վ այն կնպաստի սահմանին կայունության հաստատմանը:**

-Ենթադրություններ անելու փոխարեն, կարող ենք տեսնել մեր արդեն ունեցած փորձը: Մենք արդեն իսկ փորձ ունենք առաքելության տեղակայման եւ գործունեության վերաբերյալ: Դեռեւս 2022թ.-ի հոկտեմբերին ԵՄ քաղաքացիական դիտորդական առաքելությունը ժամանակավոր տեղակայվել էր հայ-ադրբեջանական սահմանին երկու ամսով: Մենք կարող ենք արձանագրել, որ բավականին զսպող դեր է ունեցել դա, եւ արձանագրել, որ Ադրբեջանի սադրիչ գործողությունները զգալիորեն նվազել են. լուրջ ագրեսիայի ակտ Ադրբեջանի կողմից չի արձանագրվել, հետեւաբար կարող ենք եզրակացնել, որ ԵՄ դիտորդների տեղակայումն այստեղ զսպող դեր է ունեցել եւ կայունացրել է սեպտեմբերյան ագրեսիայից հետո ստեղծված լուրջ անվտանգային իրավիճակը: Այս առումով կարող ենք արձանագրել, որ մենք ունենք կայունացում: Այդ արձանագրման վրա հիմնվելով՝ կարող ենք հույս հայտնել նաեւ, որ երկու տարով տեղակայվող ԵՄ դիտորդական խումբն ավելի արդյունավետ կլինի, քան եղել է արդեն հոկտեմբերից դեկտեմբեր գործած դիտորդական խումբը: Այս առումով հույս ունեմ, որ դիտորդական խմբի տեղակայման շնորհիվ կունենանք համեմատաբար կայուն իրավիճակ սահմանին:

**-Տիկին Ջուլհակյան, մեր դաշնակից Ռուսաստանն է բավականին կոշտ արձագանքել հայ-ադրբեջանական սահմանին ԵՄ դիտորդական առաքելության տեղակայմանը. սա դիտարկում է տարածաշրջանում իրավիճակն ապակայունացնելու փորձ: Ի՞նչ կասեք այս մասին:**

-Հայաստանի սուվերեն տարածքի նկատմամբ ագրեսիայի առաջին ակտն արձանագրվել է դեռեւս 2021թ.-ի մայիսին: Մենք ունեցել ենք նաեւ երկրորդ էսկալացիան արդեն նոյեմբեր ամսին, 2022թ.-ի սեպտեմբերին ունեցել ենք արդեն ավելի լուրջ էսկալացիա, բայց այս դեպքում ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ ՀԱՊԿ-ը, որպես ռազմական դաշինք, կամ չեն արձագանքել, կամ էլ արձագանքել են, բայց ոչ սպասված չափով: Պետք չէ սեփական անգործության հարցում Հայաստանին մեղադրել: Ռուսաստանին այս տարածաշրջանից չի կարող դուրս մղել որեւէ մեկը, բացի Ռուսաստանից. եթե կա երկիր, որը կարող է դուրս մղել նրան այս տարածքից, դա միայն Ռուսաստանն է իր գործողություններով կամ անգործությամբ:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՎԱՔԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

**ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը նոր օրենսդրական նախաձեռնությամբ է հանդես եկել եւ առաջարկում է փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում:**

Օրենսգքի 124-րդ հոդվածը կունենա այս տեսքը. «Հայտարարված վարժական հավաքներին 30 օրացուցային օրը չգերազանցող ժամկետով աշխատողին ներգրավելիս աշխատողի աշխատավարձը պահպանվում է աշխատողի եւ գործատուի համաձայնությամբ կամ կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված դեպքերում, սակայն ոչ պակաս, քան վարժական հավաքներին մասնակցելու օրերի համար հաշվարկված աշխատողի միջին օրական աշխատավարձի 50 տոկոսի չափով»: ArmLur.am-ը հիմնավորումից տեղեկանում է, որ այսուհետ հայտարարված վարժական հավաքներին յուրաքանչյուր պահեստազորայինի տարվա ընթացքում ներգրավելու են առավելագույնը 25 օրացուցային օր ժամկետով, որի կապակցությամբ անհրաժեշտություն է առաջացել վերանայելու նաեւ վարժական հավաքների կանչված աշխատող պահեստազորայինների՝ հիմնական աշխատանքի վայրում վարձատրության հետ կապված կարգավորումները: Խնդիրն առավել արդիական է դառնում այն պահեստազորայինների մասով, որոնց հիմնական աշխատավայրում ստանում են բարձր աշխատավարձ: Այդ նպատակով, ինչպես նաեւ հաշվի առնելով, որ, օրենքի 59-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների համաձայն, վարժական հավաքի ընթացքում քաղաքացուն հաշվարկվում է նշանակված զինվորական պաշտոնի համար նախատեսված պաշտոնային դրույքաչափը, առաջարկվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանել, որ հայտարարված վարժական հավաքներին 30 օրացուցային օրը չգերազանցող ժամկետով աշխատողին ներգրավելիս աշխատողի աշխատավարձը պահպանվում է աշխատողի եւ գործատուի համաձայնությամբ կամ կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված դեպքերում, սակայն ոչ պակաս, քան վարժական հավաքներին մասնակցելու օրերի համար հաշվարկված աշխատողի միջին օրական աշխատավարձի 50 տոկոսի չափով:

Նախագծի հեղինակները կարծում են, որ այս կարգավորումը հնարավորություն կտա, մի կողմից, վարժական հավաքներին մասնակցող աշխատողի մասով բարձր աշխատավարձ ստանալու դեպքում համապատասխան չափով պահպանված աշխատավարձի եւ հաշվարկվող պաշտոնային դրույքաչափի ընդհանուր գումարը հնարավորինս մոտարկել բարձր աշխատավարձի չափին, եւ մյուս կողմից՝ մեծ բեռ չի հանդիսանա գործատուի համար:

*ՆԱԻՐԱ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

## ԳՆՈՒՄ Է ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

Երեկ ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ «Մարտի 1»-ի գործով մեղադրյալ Գեղամ Պետրոսյանի պաշտպան Վաղարշակ Գեւորգյանը միջնորդություն է ներկայացրել գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին եւ պահանջել կարճել Գեղամ Պետրոսյանի նկատմամբ հարուցված քրեական վարույթը եւ քրեական հետապնդումը դադարեցնել: Նշենք, որ սա պաշտպանի երկրորդ միջնորդությունն է:

Ինչպես հայտնի է, 2019 թվականի օգոստոսի 4-ին «Երեւան Կենտրոն» ՔԿՀ-ից կամ բոլորին հայտնի «ԿԳԲ-ի պադվալից» ազատ արձակվեց «Մարտի 1»-ի գործով մեղադրյալ Գեղամ Պետրոսյանը: Անցել է շուրջ 4 տարի, սակայն Գեղամ Պետրոսյանի ազատ արձակվելուց հետո որեւէ քննչական գործողություն չի արվել, եւ քրեական գործը մնացել է Հակակոռուպցիոն կոմիտեի դարակներից մեկում:

Հիշեցնենք, որ Գեղամ Պետրոսյանը մեղադրվում է 2008 թվականի մարտի 1-ին հրազենի գործադրմամբ Զաքար Հովհաննիսյանին սպանելու համար: Նրան մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ ՔՕ 104-րդ հոդվածի 1-ին մասով, այն է՝ սպանություն: Վերջինիս նախաքննական մարմինը կալանավորել էր, քանի որ քրեական գործով Գեղամ Պետրոսյանի դեմ ցուցմունք էր տվել ոստիկանության զորքերի ենթասպա Ալեքսանդր Ազարյանը, թե տեսել է՝ ինչպես է Գեղամ Պետրոսյանը կրակել Զաքար Հովհաննիսյանի վրա:

Ավելի ուշ փորձաքննության արդյունքները ցույց տվեցին, որ իրականում Պետրոսյանի զենքի եւ դիակում եղած պարկուճի տեսակները չեն համընկնում, եւ այդ հիմքով Պետրոսյանն ազատ արձակվեց:

## ԱՅՍՕՐ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

Լաչինի միջանցքով մեքենաների անխոչընդոտ անցումը վերականգնելու եւ միջանցքի նպատակային օգտագործման փաստը հաստատելու հարցն է քննարկվել երեկ Ադրբեջանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցիչների եւ ՌԴ խաղաղապահ զորախմբի հրամանատարի եռակողմ հանդիպմանը: Կողմերը քննարկել են նաեւ էլեկտրամատակարարման եւ գազի անխափան մատակարարման հարցերը:

Բացի այդ, հանդիպման շրջանակներում քննարկվել է Դրմբոնի եւ Կաշենի հանքավայրերում ադրբեջանական կողմի ներկայացուցիչների կողմից շրջակա միջավայրի մոնիտորինգի հնարավորությունը:

Պայմանավորվածություններ են ձեռք բերվել հետագա համագործակցության վերաբերյալ՝ լարվածության նվազեցման եւ տարածաշրջանում խաղաղ կյանքի հաստատման ուղղությամբ:

## ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ Է

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը փետրվարի 17-ից գտնվում է Ամերիկայի Միացյալ նահանգներում: Armlur.am-ը տեղեկացավ, որ նա մինչեւ մարտի 2-ը կլինի այնտեղ: Հետաքրքիր է, որ նրա գործուղումն այդքանով չի ավարտվում, եւ Հայաստան վերադառնալուց հետո նա միանգամից այլ գործուղումների է լինելու, այսինքն՝ խիստ զբաղված է: Տեղեկացանք, որ Զարեհ Սինանյանը եւ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի օրենսդրական նախաձեռնությունների եւ ռազմավարությունների մշակման վարչության ռազմավարությունների մշակման բաժնի պետ Հովհաննես Ալեքսանյանը մարտի 7-11-ը ներառյալ վարչապետի հրամանով գործուղվելու են Լիբանանի Հանրապետություն (Բեյրութ՝ մարտի 7-ին, մարտի 9-11-ը) եւ Սիրիայի Արաբական Հանրապետություն (Դամասկոս՝ մարտի 7-8-ը, Հալեպ՝ մարտի 8-9-ը, Քեսաբ՝ մարտի 9-ին) երկրաշարժից տուժած հայկական համայնքների եւ հաստատությունների խնդիրների եւ կարիքների վերհանման նպատակով: Տեղեկացանք նաեւ, որ Զարեհ Զոն Սինանյանի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ եւ նաեւ Սիրիա գործուղման հետ կապված ծախսերը կատարվելու են Հայաստանի Հանրապետության՝ 2023 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի «Հայաստան-Սփյուռք գործակցության» ծրագրի «Աշխատանք սփյուռքի համայնքներում» միջոցառման համար նախատեսված միջոցների հաշվին:

## ԿՄԵԿՆԵՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ԵԽԽՎ մշտական հանձնաժողովի նիստին մասնակցելու համար 2023 թվականի մարտի 1-3-ը Հաագա (Նիդերլանդների Թագավորություն) կմեկնի Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանը: Տեղեկացանք, որ գործուղման հետ կապված ճանապարհածախսի, օրապահիկի, ինչպես նաեւ գիշերավարձի՝ ըստ փաստացի կատարած ծախսերը կատարվելու են Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեով Ազգային ժողովին այդ նպատակի համար հատկացված միջոցների հաշվին:

Իսկ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) սոցիալական, առողջապահության եւ կայուն զարգացման հարցերի հանձնաժողովի նիստին եւ Հանուն առողջ միջավայրի կոնտակտային խորհրդարանականների ցանցի հերթական նիստին մասնակցելու համար 2023 թվականի մարտի 15-19-ը՝ Մարաքեշ (Մարոկկո), ինչպես նաեւ Եվրոպայի խորհրդի տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի 44-րդ նստաշրջանին մասնակցելու համար մարտի 20-25-ը Ստրասբուրգ (Ֆրանսիայի Հանրապետություն) կգործուղվի Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Գեւորգյանը: Ստրասբուրգ գործուղման հետ կապված բոլոր ծախսերի վճարումը կատարում է հրավիրող կողմը:

ՄԻԱՆՁՆՅԱ

# «ՅՈՒՂՈՏ» ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՊԹՈՂԸ

**«Ֆակտորի փրոդաքշն» ՍՊԸ-ն մշտապես մեկ անձից կատարվող գնման ընթացակարգով շարունակում է միլիոնավոր դրամներ ստանալ պետական բյուջեից: Այս անգամ խոսքը 27 մլն դրամի մասին է, իսկ պայմանագիրն էլ կնքվել է ՀՀ արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության հետ: Այս անգամ խոսքը ՀԱՊԿ ԱԽ խորհրդի նիստի ժամանակ իրականացրած կազմակերպչական ծառայությունների մասին է: Այդ գումարի մեջ են եղել գովազդային վահանակների տեղադրում, տարբեր տեխնիկաների վարձակալումներ:**

Նշենք, որ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի համաձայն՝ «Ֆակտորի փրոդաքշն» ընկերությունը ստեղծվել է 2017-ին: Հիմնադիրներն են Վազգեն Պողոսյանը եւ Ռուդիկ Տեր-Գալստյանը: Նրանք աշխատել են «Շարմ հոլդինգ» ՍՊԸ-ում, Հանրային հեռուստաընկերությունում, երբ վերջինի ղեկավարը Ռուբեն Զաղինյանն էր:

Ընկերության ստեղծման, ինչպես նաեւ այժմյան գործունեության մասով ակտիվ դերակատարում ունի Երեւանի նախկին փոխքաղաքապետ, Հանրային հեռուստաընկերության գլխավոր պորդյուսեր Տիգրան Վիրաբյանը: Իհարկե, օրենքով ընկերներ ունենալն արգելված չէ, բայցեւ, համաձայնե՛ք, տարօրինակ է, որ «շա՛տ պատահականորեն» պետական նշանակության կարեւորագույն ու «յուղոտ» բոլոր միջոցառումները միշտ նույն՝ Հանրային ՀԸ-ի գլխավոր պրոդյուսերի հետ կապվող ընկերությունն է հաղթում: Ֆիքսենք՝ ընդհանուր հաշվով, «Ֆակտորի փրոդաքշն» ՍՊԸ-ն 2018-2022 թվականներին պետական տարբեր մարմինների հետ կնքել է 14 պայմանագիր, որոնցից 12-ը՝ առանց մրցույթի: Պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմում է մոտ 1,5 միլիարդ դրամ:

«Ֆակտորի փրոդաքշն» ՍՊԸ-ին 2019-20 թթ.-ին 325 մլն դրամ էր վճարվել Երեւանում ամանորյա միջոցառումները կազմակերպելու համար, դրան նախորդած տարում էլ 30 մլն դրամ էր հատկացվել միայն Երեւանի գլխավոր տոնածառի լույսերի վառման արարողության համար: Մեկ այլ պայմանագրով էլ «Ֆակտորի փրոդաքշն» ՍՊԸ-ին 24 մլն դրամի կամ 49 հազար 300 ԱՄՆ դոլարի շրջանակներում Երեւանի քաղաքապետարանը տոնական միջոցառումներ էր պատվիրել 2018 թվականի դեկտեմբերի 31-ի գիշերվա համար: 2019-ին «Ֆակտորի փրոդաքշն»-ին էր բաժին հասել նաեւ Քաղաքացու օրվա միջոցառումների անցկացման համար նախատեսված 108,5 մլն դրամի 25 մլն 20 հազար դրամը՝ կրկին մեկ անձից կատարվող գնումների ընթացակարգով: «Ֆակտորի փրոդաքշնը» ծառայություններ է մատուցել նաեւ Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի ու «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումի ժամանակ: Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովին նվիրված Հանրապետության հրապարակի գալա համերգի կազմակերպման համար կազմակերպությունը պետբյուջեից ստացել է 76 մլն 135 հազար դրամ, իսկ 2018-ի դեկտեմբերի 9-12-ը անցկացված «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումի շրջանակներում ծառայություններ մատուցելն արժեցել է 54 միլիոն 790 հազար դրամ:

Կառավարության պահուստային ֆոնդից «Ֆակտորի փրոդաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 750 մլն 192 հազար դրամ էր հատկացվել նաեւ 2022 թ. մայիսի 21-31-ը Երեւանում անցկացված բռնցքամարտի մեծահասակների Եվրոպայի առաջնության կազմակերպման եւ անցկացման նպատակով:

Հավելենք, որ ՍՊԸ-ի հիմնադիրներ Ռուդիկ Տեր-Գալստյանն ու Վազգեն Պողոսյանն ընկերներ են: Տեր-Գալստյանը 2012-2017 թվականներին եղել է Հանրային հեռուստաընկերության գլխավոր պրոդյուսերը, իսկ Վազգեն Պողոսյանը եղել է Հանրայինի գործադիր պրոդյուսերը: 2021 թվականի դեկտեմբերի 2-ին Վազգեն Պողոսյանը նշանակվել է հանրապետության նախագահի օգնական՝ Արմեն Սարգսյանի օրոք: 2022թ. հունվարի 23-ին Արմեն Սարգսյանը հրաժարական տվեց, իսկ մարտի 3-ին նախագահի պաշտոնը ստանձնած Վահագն Խաչատուրյանը Վազգեն Պողոսյանին ազատեց օգնականի պաշտոնից մարտի 18-ից:

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ԳՈՐԾՈՒՂՈՒՄ՝ ՄԱՐԱՔԵՇ

«Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Գեւորգյանը մարտի 15-19-ը կգործուղվի Մարաքեշ (Մարոկկո)՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) սոցիալական, առողջապահության եւ կայուն զարգացման հարցերի հանձնաժողովի նիստին եւ Հանուն առողջ միջավայրի կոնտակտային խորհրդարանականների ցանցի հերթական նիստին մասնակցելու համար:

Պատգամավորը մարտի 20-25-ը կգործուղվի նաեւ Ստրասբուրգ, որտեղ կմասնակցի Եվրոպայի խորհրդի տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի 44-րդ նստաշրջանին:

Արմեն Գեւորգյանի գործուղման հետ կապված ճանապարհածախսերը՝ օրապահիկը, ինչպես նաեւ գիշերավարձը, կկատարվեն պետբյուջեի հաշվին:

## ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն ընդունել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի քաղաքականությունների եւ ցկյանս կրթության համակարգերի բաժնի ղեկավար Բորեն Շակրունի գլխավորած փորձագիտական խմբին: Առաքելությունը Հայաստան է գործուղվել կրթության ոլորտում կարիքների գնահատման նպատակով:

Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են Հայաստանում մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտի զարգացման, քոլեջների եւ ուսումնարանների գործունեության, մարդկային կապիտալի զարգացման ու հմտությունների բարելավման կարեւորությանը եւ այս համատեքստում համագործակցության հեռանկարներին:

Ժաննա Անդրեասյանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի երկայացուցիչներին տեղեկացրել է, որ առաջիկայում ՀՀ կառավարության հաստատմանը կներկայացվի «Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվում է աշխատանքի վրա հիմնված ուսուցման մոդելը, որը մինչ այս կիրառվել է փորձնական ծրագրերով, դարձնել ինստիտուցիոնալ:

ԿԳՄՍ նախարարի խոսքով՝ կրթության ոլորտի քաղաքականությամբ ստեղծվել է մասնավորի հետ համագործակցության նոր ձեւաչափերի գործիքակազմ, ինչի արդյունքում դիտարկվում է նաեւ քոլեջների եւ ուսումնարանների կառավարման մոդելը փոխելու հնարավորությունը:

Հանդիպմանը կողմերն անդրադարձել են նաեւ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի: Պայմանավորվածություն է ձեռք բերվել քննարկված հարցերի շուրջ գործնական քայլեր ձեռնարկելու վերաբերյալ:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է

# ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒՄ

**ՀՀ ֆինչական կոմիտեի Արմավիրի մարզային ֆինչական վարչության Վաղարշապատի ֆինչական բաժնում մեկ անձի մասով ավարտվել է 2022թ. օգոստոսի 18-ին Էջմիածին քաղաքում տեղի ունեցած սպանության, սպանության փորձի դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:**



2022թ. օգոստոսի 18-ին՝ ժամը 23:25-ին, հաղորդում էր ստացվել այն մասին, որ Վաղարշապատի բժշկական կենտրոն բուժօգնության են տեղափոխվել 27-ամյա երկու երիտասարդ՝ հրազենային վնասվածքներով, որոնցից մեկը, գիտակցության չգալով, մահացել էր հիվանդանոցում:

Իրականացված քննչական եւ վարութային անհրաժեշտ գործողությունների արդյունքում պարզվել են դեպքի հանգամանքները, այդ թվում՝ դեպքի վայրը, շարժառիթը, միջադեպին մասնակից անձանց շրջանակը, ինչպես նաեւ ենթադրյալ հանցագործություն կատարած անձանց ինքնությունը, անհատականացվել են նրանց գործողությունները, դրանց տրվել է քրեաիրավական գնահատական:

Մասնավորապես, քննությամբ պարզվել է, որ դեպքին նախորդող ժամանակահատվածում Էջմիածին քաղաքի մի խումբ երիտասարդներ վիճաբանել են համաքաղաքացի 21-ամյա երիտասարդի հետ, որի ընթացքում վիճաբանությանը մասնակից անձանցից մեկը՝ Կարատեիստ Հապետ մականունով Էջմիածնի 43-ամյա բնակիչ Հ.Կ.-ն ծեծել է վերջինիս, ինչի մասին երիտասարդը տեղեկացրել է 27-ամյա եղբորը, որը, ի պատասխան եղբոր նկատմամբ կիրառված բռնության, իր հերթին ծեծել է հիշյալ Հ.Կ.-ին:

Դեպքից օրեր անց վիճաբանության մասին տեղեկացել են նաեւ վիճաբանող կողմերին քաջ ծանոթ անձինք, որոնք փորձել են կողմերին հաշտեցնել, ինչը, սակայն, նրանց չի հաջողվել, եւ 21-ամյա երիտասարդի եւ հասակակիցների վիճաբանությունը վերաճել է երկու խմբավորումների միջեւ հակամարտության, որի կարգավորման համար նշված անձինք դիմել են այլ՝ Ուջանիկ մականունով Ա.Մ.-ին եւ Գրիգլի մականունով հայտնի Է.Մ.-ին:

Շարունակելով ագրեսիվ վարքագիծը՝ 27-ամյա երիտասարդն իր ընկերոջ հետ կրկին հանդիպել է եղբորը ծեծի ենթարկած Հ.Կ.-ի եւ Ա.Մ.-ի հետ, որի ընթացքում ծագած վիճաբանության ժամանակ դարձյալ ծեծի են ենթարկել նրանց: Չհանդուրժելով իրենց նկատմամբ նման վերաբերմունքը՝ վերջիններս որոշել են վրեժխնդիր լինել 27-ամյա երիտասարդից:

Այդ նպատակով Ա.Մ.-ն, 27-ամյա երիտասարդի եւ վերջինիս ընկերոջ կողմից ծեծի ենթարկվելուց հետո ձեւավորված լարված եւ թշնամական հարաբերությունների պատճառով առաջացած վրեժի շարժառիթով նախապես վարձակալված տանն ընկերների հետ պլանավորել է համաքաղաքացուն ապօրինաբար կյանքից զրկելու ծրագիրը, կատարել դերաբաշխում: Ըստ դրա՝ «Օպել» մակնիշի ավտոմեքենան պետք է վարեր ինքը, Գիժ մականվամբ Ա.Բ.-ն՝ հսկեր տարածքը, իսկ Է.Մ.-ն պետք է իրականացներ 27-ամյա երիտասարդին ապօրինաբար կյանքից զրկելու ծրագիրը. 2022 թվականի օգոստոսի 18-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենայով գնացել են Էջմիածին քաղաք, որտեղ դարանակալել եւ սպասել են 27-ամյա երիտասարդին:

Ժամը 21:10-ի սահմաններում, երբ 27-ամյա երիտասարդն ընկերոջ կողմից վարած «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայով հասել է Էջմիածին քաղաքի Թումանյան-Աբովյան փողոցների խաչմերուկ, Է.Մ.-ն իր կողմից ապօրինի կրած ԱԚ տեսակի ինքնաձիգից այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով նշված փողոցում գտնվող տներից մեկի դիմաց՝ ավտոմեքենայից դիմահար կրակահերթ է արձակել «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի ուղղությամբ, որի հետեւանքով նշված ավտոմեքենայի վարորդը՝ 27-ամյա երիտասարդի ընկերը՝ ստանալով կյանքի հետ անհամատեղելի հրազենային վիրավորում, հիվանդանոցում մահացել է, իսկ 27-ամյա երիտասարդը ստացել է հրազենային ծանր մարմնական վնասվածքներ, սակայն բժիշկներին հաջողվել է փրկել նրա կյանքը:

Ձեռնարկված քննչական գործողությունների, ինչպես նաեւ ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում մահացած երիտասարդին պատկանող «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան հայտնաբերվել էր Էջմիածին քաղաքի Կնունյանց փողոցում՝ ճամփեզրին կայանված ավտոմեքենաներին բախված: Կատարված զննությամբ հիշյալ ավտոմեքենայում հայտնաբերվել էին ատրճանակ, արնանման հետքեր, իսկ ավտոմեքենայի վրա՝ մեկ տասնյակից ավելի հրազենային վնասվածքներ, որոնք, քննությամբ ձեռք բերված տվյալների համաձայն, հետեւանք էին Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցում արձակված կրակահերթի:

Ենթադրյալ հանցագործություն կատարած անձինք հանցագործությունը թաքցնելու նպատակով հիշյալ «Օպել» մակնիշի ավտոմեքենան Էջմիածին-Արմավիր ավտոճանապարհին գտնվող «Մատուռ» կոչվող հուշահամալիրի հարակից տարածքում այրել էին: Քննությամբ նշված ավտոմեքենայի սրահում հայտնաբերվել էին ինքնաձիգ՝ այրված վիճակում, կրակված պարկուճներ, փամփուշտի գնդակ, չկրակված փամփուշտներ:

Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ Ա.Մ.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 46-44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը: Վերջինիս մասով քրեական վարույթի նախաքննությունն ավարտվել է, եւ անջատված մասով քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան:

Ա.Բ.-ի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ Է.Մ.-ի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 46-44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով:

Վերջիններիս վերաբերյալ մասն առանձնացվել է առանձին վարույթում, նրանց նկատմամբ հայտարարվել է հետախուզում, որպես խափանման միջոց է ընտրված կալանավորումը:

Ձեռնարկվում են անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական եւ օպերատիվ-որոնողական միջոցառումներ՝ հիշյալ անձանց հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու ուղղությամբ:

ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԵԾԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

**Փետրվարի 27-ին ոստիկանության Մասիսի բաժին հիվանդանոցից հաղորդում էր ստացվել, որ կրծքավանդակի կտրածծական վերքով բուժօգնության է դիմել Նորամարգ գյուղի 34-ամյա մի բնակիչ:**

Մասիսի բաժնի համայնքային ոստիկանների ձեռնարկած միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ժամը 18:30-ի սահմաններում հիվանդանոց տեղափոխված տղամարդը գյուղի ակումբի մոտ անձնական հարցի շուրջ վիճաբանել է 36-ամյա համագյուղացու հետ, այդ ընթացքում էլ 36-ամյա տղամարդը դանակահարել է նրան: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում 36-ամյա նորամարգցին հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության Մասիսի բաժին: Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել է հանցագործության գործիք դանակը: Նա եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Մասիսի քննչական բաժին: Նախաձեռնվել է քրեական վարույթ:

ԼՈՒՐԵՐ

## ԲԺՇԿԻ ԵՆ ԾԵԾԵԼ

Փետրվարի 27-ին ոստիկանության Կապանի բաժնի քրեական հետախույզները օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ փետրվարի լույս 25-ի գիշերը «Կապան» բժշկական կենտրոն բուժօգնության տեղափոխված հիվանդներից մեկի հարազատները հիվանդանոցի ընդունարանում կատարել են խուլիգանություն, հարվածներ են հասցրել հերթապահ բժշկին եւ շտապօգնության մեքենայի վարորդին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ խուլիգանությունը կատարել են կապանցի 31 եւ 30 տարեկան երկու երիտասարդ: Նրանք հայտնաբերվել եւ ներկայացվել են Սյունիքի մարզային քննչական վարչություն:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են վարույթն իրականացնող մարմին:

## ՓՈԽԱՏԵՂՈՒՄՆԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼ

Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի հրամաններով՝ փոխատեղումներ են կատարվել Քրեակատարողական ծառայության համակարգում:

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի պետ, արդարադատության գնդապետ Արսեն Բախշիի Արզումանյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից եւ փոխադրման կարգով նշանակվել «Սեւան» քրեակատարողական հիմնարկի պետ:

«Գորիս» քրեակատարողական հիմնարկի պետ, արդարադատության գնդապետ Մանուկ Արմենակի Պողոսյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից եւ փոխադրման կարգով նշանակվել «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի պետ:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի պետ, արդարադատության գնդապետ Արմեն Վանիկի Մարտիրոսյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից եւ փոխադրման կարգով նշանակվել «Գորիս» քրեակատարողական հիմնարկի պետ:

«Սեւան» քրեակատարողական հիմնարկի պետ, արդարադատության գնդապետ Գեւորգ Ժուդոլֆի Հովհաննիսյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից եւ փոխադրման կարգով նշանակվել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի պետ:

«Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի պետ, արդարադատության գնդապետ Ռուբեն Էդուարդի Խալապյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից եւ փոխադրման կարգով նշանակվել «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պետ:

«Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պետ, արդարադատության գնդապետ Աղասի Խաչիկի Խաչատրյանն ազատվել է քրեակատարողական ծառայությունում զբաղեցրած պաշտոնից:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 28-ից մարտի 1-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 56 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

## ՏՆՕՐԵՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԸ

Վերջին տարիներին Դիլիջան ազգային պարկի բոլոր տնօրենները կամ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարները իրենց աշխատանքային գործունեության արդյունքում ի վերջո հայտնվել են հարուցված քրեական գործերով մեղադրյալի կարգավիճակում: Կարծես թե Դիլիջանի ազգային պարկի տնօրենի պաշտոնն անիծված լինի. այն ոչ մեկին հաջողություն չի բերում: Այդ պաշտոնում վերջերս պաշտոնավարած, Դիլիջանի ազգային պարկի տնօրենի պաշտոնակատար Արմեն Ղազարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ 2021թ. դեկտեմբերից մինչեւ 2022թ.-ի հունվարն ընկած ժամանակահատվածում, «Հաղարծին տեղամաս» մասնաճյուղի՝ առանց պահպանության մնացած նշված պահաբաժնից ապօրինի հատվել է 32 հատ տարբեր տեսակի թաց կանգուն ծառ՝ պետությանը պատճառելով 2 միլիոն 217 հազար 500 ՀՀ դրամի գույքային վնաս: ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնում քննվող քննչական վարույթի նախաքննության արդյունքում պարզվել են պաշտոնեական անփութության արդյունքում երեք տասնյակից ավելի ծառերի ապօրինի հատման հանգամանքները: Մասնավորապես, քննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար Արմեն Ղազարյանը «Հաղարծին տեղամաս» մասնաճյուղի տարածքի եւ ապրանքանյութական արժեքների պահպանության պատասխանատվությունը ժամանակավորապես նույն կազմակերպության տեսուչին հանձնելու նպատակով իր հրամանով ստեղծել է հանձնաժողով, սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել է իրեն: Նա հաստատել է հանձնում-ընդունումը, որի ընթացքում, սակայն, նշված մասնաճյուղի պահաբաժիններից մեկի անտառապահի պարտականությունները կատարողի անաշխատունակության վիճակում գտնվելու պայմաններում վերջինիս պարտականությունների կատարումն այլ անձի չի հանձնարարել, ինչի հետեւանքով պահաբաժինն օրեր շարունակ մնացել է առանց հսկողության: Դիլիջանի ազգային պարկից տեղեկացա, որ 2023թ. փետրվարի 22-ին Դիլիջանի ազգային պարկի տնօրենի պաշտոնակատար է նշանակվել Ռոբերտ Ռուդիկի Ալիխանյանը, որը Դիլիջան համայնքի բնակիչ է: Նա նախկինում աշխատել է ազգային պարկում, պաշտոնավարել է որպես ազգային պարկի տնօրենի գիտական գծով տեղակալ: Դիլիջանի ազգային պարկից հայտնեցին, որ փետրվարի 28-ին ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնյաները ժամանել են Դիլիջանի ազգային պարկ, եւ Ռոբերտ Ալիխանյանը նրանց հետ աշխատանքային խորհրդակցություն է անցկացրել:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

## 3500 ԱՄՆ ԴՈԼԱՐ ԿԱՇԱՌՔ

**ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում բացված քրեական վարույթով իրականացված նախաքննությամբ բացահայտվել են ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնատար անձի կողմից խոշոր չափերով կաշառք ստանալու դեպքեր:**

Նախաքննությամբ ապացույցներ են ձեռք բերվել այն մասին, որ ՀՀ ՊՆ N զորամասի հրամանատարի պաշտոնը զբաղեցրած Վ. Ա.-ն, իր ծառայողական լիազորություններն օգտագործելով, կաշառք տվող անձանց օգտին գործողություններ կատարելու համար Վ. Ս.-ի միջոցով ստացել է խոշոր չափերով կաշառք:

Մասնավորապես, նախաքննությամբ պարզվել է, որ ՀՀ ՊՆ N զորամասի համապատասխան ծառայության պետ Վ.Ս.-ն, նույն զորամասի դասակի հրամանատար Տ. Չ.-ից տեղեկանալով այլ պաշտոնի նշանակվելու վերջինիս ցանկության մասին, պատրաստակամություն է հայտնել օժանդակել այդ նպատակով նրա կողմից նույն զորամասի հրամանատարին 1.500 ԱՄՆ դոլար կաշառք տալուն: Վ. Ս.-ն այդ մասին տեղեկացրել է հիշյալ պաշտոնատար անձին՝ իր մտերիմ Վ. Ա.-ին, որը համաձայնել է կաշառքի դիմաց միջնորդել իր վերադասին՝ Տ. Չ.-ին ծառայության մեջ առաջխաղացման կարգով ավելի բարձր պաշտոնի նշանակելու:

Համաձայն նախապես ձեռք բերած պայմանանավորվածության՝ 2022 թ. մարտի 12-ին Տ. Չ.-ն կաշառքի գումարի մի մասը փոխանցել է Վ. Ս.-ին, որն իր հերթին այն փոխանցել է Վ. Ա.-ին: Արդյունքում Տ. Չ.-ն 2022 թ. մարտի 22-ին զեկուցագիր է ներկայացրել Վ. Ա.-ին՝ խնդրելով միջնորդել վերադասին՝ իրեն նշանակել հիշյալ զորամասի համապատասխան ստորաբաժանման պետի պաշտոնին, որից հետո Վ. Ա.-ն, ստացած կաշառքի դիմաց իր ծառայողական լիազորություններն օգտագործելով Տ. Չ.-ի օգտին, միջնորդություն է ներկայացրել իր վերադասին, եւ Տ. Չ.-ն նշանակվել է նշված պաշտոնին:

Բացի այդ, Վ. Ս.-ն, մտերիմ հարաբերությունների մեջ գտնվելով նույն զորամասի գումարտակի հրամանատարի տեղակալշտաբի պետ Հ. Ա.-ի հետ եւ նրանից տեղեկանալով, որ զորամասի համապատասխան գումարտակի հրամանատարը տեղափոխվում է այլ պաշտոնի, առաջարկել է օժանդակել Հ. Ա.-ին՝ հրամանատարի հիշյալ պաշտոնին նշանակվելու համար վերադաս պաշտոնատար անձին կաշառք տալու: Այնուհետեւ Վ. Ս.-ն այդ մասին հայտնել է Վ. Ա.-ին, որը համաձայնել է 2.000 ԱՄՆ դոլար կաշառքի դիմաց միջնորդել իր վերադասին՝ Հ. Ա.-ին՝ ծառայության մեջ առաջխաղացման կարգով ավելի բարձր պաշտոնի նշանակելու: 2022թ. մարտից մայիսն ընկած ժամանակահատվածում Հ. Ա.-ն Վ. Ս.-ի միջոցով Վ. Ա.-ին փոխանցել է պայմանավորված կաշառքի գումարից 1500 ԱՄՆ դոլարը:

Արդյունքում Վ. Ա.-ն, կաշառքի դիմաց իր ծառայողական լիազորություններն օգտագործելով Հ. Ա.-ի օգտին, հաստատել է Հ. Ա.-ի ծառայողական բնութագիրը եւ մայիսի 18-ին ներկայացրել է վերջինիս համապատասխան գումարտակի հրամանատարի պաշտոնին նշանակելու միջնորդագիր, որից հետո Հ. Ա.-ն նշանակվել է հիշյալ պաշտոնում: Վերը նշված հանցավոր արարքների կատարման համար Վ. Ա.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով /2 դրվագ/, Վ. Ս.-ին՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-312-րդ հոդվածի 2-րդ մասով /2 դրվագ/, Հ. Ա.-ին եւ Տ. Չ.-ին՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 2-րդ մասով:

Վ. Ա.-ի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը: Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է: Վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, հանձնվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

## ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

**ՀՀ պետական վերահսկողական ծառայությունում տեղի է ունեցել 2022 թվականին կատարված աշխատանքներն ամփոփող ընդլայնված խորհրդակցություն՝ ողջ անձնակազմի մասնակցությամբ:**

Նիստը վարել է ծառայության ղեկավար Ռոմանոս Պետրոսյանը: Զեկույցներով հանդես են եկել ծառայության ղեկավարի տեղակալները՝ ներկայացնելով իրենց համակարգման ներքո գտնվող հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կողմից 2022 թվականին իրականացված, նախաձեռնված եւ ընթացքում գտնվող ուսումնասիրությունների, մշտադիտարկումների, վերլուծությունների եւ ռիսկերի գնահատման վերաբերյալ համառոտ արդյունքային ցուցանիշները:

2022 թվականին ծառայության պետահրավական ոլորտի վերահսկողության վարչությունն իրականացրել է 3 ուսումնասիրություն եւ 14 մշտադիտարկում (2021 թվականին մշտադիտարկումները 5-ն էին, իսկ ուսումնասիրությունները՝ 3-ը), որի ընթացքում արձանագրվել են գնման ընթացակարգի, պետական միջոցների անարդյունավետ կառավարման դեպքեր, ինչպես նաեւ ի հայտ են բերվել առաջարկություններին չարձագանքելու դեպքեր եւ այլ բնույթի խախտումներ: Ծառայության պետահրավական ոլորտի վերահսկողության վարչության՝ 2022 թվականին արձանագրած խախտումները կազմել են մոտ 11 մլրդ ՀՀ դրամ: Ծառայության տնտեսական ոլորտի վերահսկողության վարչությունը 2022 թվականին իրականացրել է 6 ուսումնասիրություն եւ 21 մշտադիտարկում: Հարկ է նկատել, որ, 2021 թվականի համեմատությամբ, մշտադիտարկումներն ավելացել են 17-ով: Իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքում խախտումներ են արձանագրվել պետական կառավարման մարմիններում, նրանց ենթակա հիմնարկներում: Վարչության արձանագրած խախտումները կազմել են 8,45 մլրդ. ՀՀ դրամ:

Ծառայության ռիսկերի գնահատման եւ վերլուծության վարչությունը 2022 թվականին իրականացրել է 13 մշտադիտարկում եւ 195 վերլուծություն, որի արդյունքում վեր են հանվել Կառավարության հավանությանն արժանացած ներդրումային ծրագրերի իրականացման հնարավոր ռիսկերը, պետական գնումներում հաղթող ճանաչված որոշ տնտեսվարող սուբյեկտների հնարավոր փոխկապակցվածությունը, արձանագրվել են մաքսային մարմնի կողմից մաքսային հսկողությանն առնչվող մի շարք թերացումներ:

Վարչությունը 2022 թվականի ընթացքում արձանագրել է 28,3 մլն ՀՀ դրամի խախտում:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 14 ճՏՊ. 2 մարդ զոհվել է, 18-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

Նոր համաձայնագիրը կխթանի տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում Հայաստանի եւ Ռուսաստանի համագործակցությունը:

««Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» համաձայնագիրն ԱԺ-ում ներկայացրեց Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գեւորգ Մանթաշյանը:

Համաձայնագրի նպատակը Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմինների միջեւ տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում համագործակցության խթանումն է:

«Համաձայնագրի կիրարկմամբ նախատեսվում է նպաստել տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ փոխգործակցության ընդլայնմանը՝ ներառյալ սպառնալիքների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման եւ դրանց համատեղ դիմակայման, տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակով վստահության ամրապնդման միջոցառումների համաձայնեցման ու իրականացման, օրենսդրական դաշտի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման ուղղություններով»,- ասաց Մանթաշյանը:

Համաձայնագրով սահմանվում են տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում համագործակցության ուղղությունները Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմինների միջեւ:

Մասնավորապես, կողմերը համագործակցություն են իրականացնում հետեւյալ հիմնական ուղղություններով՝ տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառի սպառնալիքներին հակազդման համակարգում, իրավապահ ոլորտում տեղեկատվության փոխանակում՝ ահաբեկչական եւ այլ հանցավոր նպատակներով տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման հետ կապված հանցագործությունները բացահայտելու, կանխարգելելու, կանխելու եւ հետաքննելու նպատակով, տեղեկատվական անվտանգության ապահովման հարցերի շուրջ երկու պետությունների օրենսդրության վերաբերյալ տեղեկատվության փոխանակում եւ այլն:

Համաձայնագիրը ստորագրվել է 2022 թվականի ապրիլի 19-ին Անվտանգության խորհուրդների միջեւ:

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ

# ՀԱՐԿԱՅԻՆ ՉԱՐԱՃԱՀՈՒՄՆԵՐ՝ «ՆՈՐ ՁՈՎՔ» ՍՊԸ-ՈՒՄ

**ՀՀ ՊԵԿ հեսաբննության եւ օպերատիվ հետախուզության վարչությունից ստացված հանցանքի մասին հաղորդման հիման վրա՝ ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով նախաձեռնված եւ կատարվող ծավալուն նախաքննությամբ զբաղվել են «Նոր Ձովք» ՍՊ ընկերությունում առերեւույթ հարկային չարաշահումներ կատարելու, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ իրացման շրջանառությունն առանձնապես խոշոր չափերով նվազ ցույց տալու միջոցով հարկային պարտավորությունները չկատարելու հանցավոր մեխանիզմի մի շարք էական հանգամանքներ:**

Մասնավորապես, ՀՀ քննչական կոմիտեի, Ազգային անվտանգության ծառայության եւ Պետական եկամուտների կոմիտեի աշխատակիցների կողմից իրականացված վարութային եւ ապացուցողական ծավալուն գործողությունների, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Նոր Ձովք» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր Ա.Ա.-ն, «Նոր Ձովք» ՍՊ ընկերության պատասխանատու անձանց՝ տնօրեն Ռ.Ա. -ի եւ գլխավոր հաշվապահ Ս.Ս.-ի հետ նախնական համաձայնությամբ, առանձնապես խոշոր չափերով՝ 4.127.611.164 ՀՀ դրամ հարկեր չվճարելու նպատակով 2019-2023 թթ. ընթացքում «Նոր Ձովք» ՍՊ ընկերության հարկային հաշվարկներում մտցնելով խեղաթյուրված տվյալներ՝ թաքցրել են հարկման օբյեկտը: Հանցավոր մտադրությունն անխոչընդոտ իրագործելու, «Նոր Ձովք» ՍՊ ընկերության բոլոր խանութներից ստացվող եկամուտները թաքցնելու եւ միաժամանակ իրական շրջանառությունը վերահսկելու նպատակով 2019-2023թթ. ընթացքում ներգրավվել է ծրագրային ապահովման ոլորտում գործունեություն իրականացնող ՍՊԸ, որը «Նոր Ձովք» ՍՊԸ սեփականատիրոջ հանձնարարությամբ եւ վճարի դիմաց հանցանքի կատարման համար տրամադրել է տեղեկատվական տեխնոլոգիաների համապատասխան գործիքներ եւ միջոցներ: Մասնավորապես, «Նոր Ձովք» ՍՊ ընկերության խանութների ցանցում ներդրվել է առեւտրային ծրագիրը, որը համակցվել է թաքցված էլեկտրոնային սերվերային համակարգի: «Նոր Ձովք» ՍՊԸ-ի խանութների ցանցում ներդրված այդ ծրագրի եւ էլեկտրոնային սերվերային համակարգի գործարկման արդյունքում «Նոր Ձովք» ՍՊ ընկերության իրացման իրական շրջանառությունը՝ վաճառված ապրանքների դիմաց փաստացի ստացված գումարը, իրական վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը կուտակվել է էլեկտրոնային սերվերային համակարգում, իսկ կիրառված հանցավոր համակարգը քողարկելու նպատակով «Նոր Ձովք» ՍՊ ընկերության խանութների ցանցից առեւտուր իրականացնող գնորդներին տրամադրվել են արտաքին (առեւտրային) ծրագրի միջոցով գեներացված, փաստացի վճարված գումարներին համապատասխան կտրոններ:

Արդյունքում 2019-2023 թթ. ընթացքում ընկերության փաստացի իրացման շրջանառությունից հարկային մարմին ներկայացված նշված ժամանակահատվածի վերաբերյալ հաշվարկ-հաշվետվություններում պակաս է ցույց տրվել իրացման շրջանառությունը, որի հետեւանքով չի հաշվարկվել եւ պետական բյուջե չի վճարվել 2.205.858.586 ՀՀ դրամ ավելացված արժեքի հարկ եւ 1.921.752.578 ՀՀ դրամ շահութահարկ:

Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ վարույթն իրականացնող մարմինը միջնորդություն է ներկայացրել հսկող դատախազին՝ «Նոր Ձովք» ՍՊԸ սեփականատեր Ա.Ա.-ի, ընկերության տնօրեն Ռ.Ա.-ի, գլխավոր հաշվապահ Ս.Ս.-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված հանցավոր արարքներ կատարելու, իսկ ծրագրային ապահովման ոլորտում գործունեություն իրականացնող վերոնշյալ ՍՊԸ սեփականատեր Վ.Ս.-ի նկատմամբ՝ նշված հանցավոր արարքները կատարելուն օժանդակելու համար, որոնք բավարարվել են: Դատարան ներկայացնելու համար վերջիններս ձերբակալվել են: Նախաքննությունը շարունավում է:

ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

# ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՇՂԹԱ ԿԱՄՐԱՑՎԻ

**Հայաստանում ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության, բռնարարին ու զոհին միմյանցից հեռու պահելու նպատակով կկիրառվեն էլեկտրոնային հսկողության միջոցներ, բռնարարի ու զոհի ոտքին կամ ձեռքին կամրացվեն համապատասխան սարքեր:**

««Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծն ԱԺ նիստում ներկայացրեց ներքին գործերի նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանը:

Փոխնախարարը հիշեցրեց, որ գործող կարգավորումներով նախատեսված է ընտանիքում բռնության ենթարկված անձանց, այսինքն՝ զոհերի պաշտպանության երկու հիմնական մեխանիզմ. դրանցից մեկը անհետաձգելի միջամտության որոշումներն են, երկրորդը՝ պաշտպանության միջոց կիրառելու մասին որոշումները: Առաջինի դեպքում ոստիկանության ծառայողի կողմից համապատասխան որոշում է կայացվում, իսկ երկրորդ դեպքում պաշտպանության միջոցը կիրառվում է դատական կարգով:

«Նախագծով առաջարկվում է այս երկու խումբ որոշումների իրականացման տեսանկյունից օգտագործել նաեւ էլեկտրոնային հսկողության միջոցներ, որովհետեւ միջազգային պրակտիկան թույլ է տալիս նշել, որ հատկապես ընտանիքում բռնության զոհ դարձած անձանց դեպքում, եթե կիրառվել է անհետաձգելի միջամտության կամ պաշտպանության մասին որոշում, այս դեպքում շատ ավելի հեշտ է զոհի պաշտպանությունն իրականացնել էլեկտրոնային հսկողության միջոցների օգտագործմամբ: Սա պրակտիկորեն ենթադրում է, որ բռնարարի, նաեւ զոհի մոտ պետք է տեղադրվի էլեկտրոնային հսկողության սարք, որն իրար մոտենալու պարագայում կամ այլ խախտումներ կատարելու պարագայում ահազանգման համապատասխան հաղորդագրություն կուղարկի իրավասու մարմնին»,- ասաց Սարգսյանը՝ հավելելով, որ այսպիսի փորձ բավականին արդյունավետ կերպով իրականացրել են Կանադան, Ֆրանսիան, ԱՄՆ-ն, Վրաստանը, Իսպանիան: Շուրջ 200 ձեռնաշղթայի հավաքածու ձեռք բերելու համար կպահանջվի մոտ 560 միլիոն դրամ:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Էդուարդ Աղաջանյանը հետաքրքրվեց, թե դա ինչպես է աշխատելու, ոստիկանության աշխատողներն ինչպես են ստանալու ահազանգը: Փոխնախարարն ասաց, որ բռնարարի ձեռքին կամ ոտքին համապատասխան շղթա կամրացվի, բռնության զոհի մոտ եւս համապատասխան սարք կտեղադրվի, որպեսզի մոտենալու դեպքում հնարավոր լինի ազդակ ստանալ: Էլեկտրոնային հսկողության միջոցները կիրառվում են արբանյակային, կենսաչափական, ռադիոալիքային կամ այլ էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ:

Էլեկտրոնային հսկողության սարքը չի կիրառվի հենց առաջին խախտման դեպքում: Դա կկիրառվի այն դեպքում, երբ նախազգուշացում ստանալուց հետո՝ 1 տարվա ընթացքում, անձը կատարել է այնպիսի բռնի արարք, որը չի պարունակում հանցակազմի հատկանիշներ, այսինքն՝ խոսքը կրկնակի խախտման մասին է: Ընտանիքում բռնության գործադրման հետ կապված 2022 թվականին ստացվել է 1547 հաղորդում:

*«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՍԱՌՅԵ ՇՈՈՒ

# ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ՝ ՁՄԵՌԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ

**Հայաստանի երկու ներկայացուցիչ փետրվարի 23-ից մարտի 5-ը Ռուսաստանի Դաշնության Կեմերովոյի մարզում՝ Կուզբասում, մասնակցում է «Ասիայի երեխաներ» ձմեռային երկրորդ մարզական խաղերին:**

Մինչեւ 16 տարեկան պատանիների համար նախատեսված մարզական խաղերի բացման հանդիսավոր արարողությանը մասնակցել են ՌԴ սպորտի նախարար Օլեգ Մատիցինը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ: Հայաստանի պատվիրակության ղեկավարը ԿԳՄՍՆ սպորտի բարձրագույն նվաճումների բաժնի պետ Արթուր Սեդրակյանն է:

Պաշտոնական հատվածին հաջորդել են խաղերի մասնակից 13 երկրի անվանական ներկայացումը եւ դրոշներով շքերթը: Հայաստանի թիմի կազմում ընդգրկված են պատանի դահուկորդ Էդգար Բեգլարյանը եւ լեռնադահուկորդ Դավիթ Ներսիսյանը:

Նրանց ուղեկցում են մարզիչներ Հովհաննես Սարգսյանն ու Ռոբերտ Մաղաքյանը: Այնուհետեւ «Կուզբաս» սառցե պալատում հավաքված ավելի քան 5 հազար հանդիսականները հետեւել են «Թռիչք դեպի հաղթանակ» սառցե շոուին՝ Օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոն Եվգենի Պլյուշչենկոյի, պատանի գեղասահորդ Ալեքսանդր Պլյուշչենկոյի եւ Օլիմպիական խաղերի մրցանակակիր Ալեքսանդրա Տրուսովայի մասնակցությամբ:

Փետրվարի 28-ին Հայաստանի ներկայացուցիչները սկսել են մրցելույթները: Լեռնադահուկորդ Էդգար Բեգլարյանը, հանդես գալով հսկա ոլորավայրէջք մրցաձ??ում, ուժեղագույնների ենթախմբի 46 մասնակիցների թվում զբաղեցրել է 27-րդ հորիզոնականը: Դավիթ Ներսիսյանը դահուկավազք մրցաձեւում 67 մասնակցի հետ պայքարում զբաղեցրել է 59-րդ տեղը, իսկ այսօր՝ մարտի 1-ին, հանդես է գալու սպրինտ ձեւում: Հայ մարզիկները, որոնք առաջին անգամ են մասնակցում միջազգային մրցաշարի, մարտի 2-ին թիմային մրցման կմասնակցեն: Խաղերի փակման արարողությունը տեղի կունենա մարտի 4-ին:

«Ասիայի երեխաներ» ձմեռային երկրորդ մարզական խաղերի շրջանակում անցկացվել է նաեւ «Ճանապարհ դեպի Օլիմպ» կրթական ծրագիրը, որն ուղղված է օլիմպիական սկզբունքների տարածմանը, «Ասիայի երեխաներ» միջազգային մարզական խաղերի պատմությանը, ազնիվ սպորտի խթանմանը եւ երիտասարդ մարզիկների միջեւ բարեկամական հարաբերությունների ամրապնդմանը: Ծրագրի իրականացման համար դասախոսներ են ներգրավվել «Ասիայի երեխաների» միջազգային կոմիտեից, Ռուսաստանի օլիմպիական կոմիտեից, Ռուսաստանի ազգային հակադոպինգային գործակալությունից (RUSADA) եւ Ռուսաստանի սպորտային հոգեբանների ասոցիացիայից:

2023 թվականի «Ասիայի երեխաներ» ձմեռային երկրորդ մարզական խաղերին 13 երկրի շուրջ հազար մարզիկ է մասնակցում, որոնք մրցում են 10 մարզաձեւում, այդ թվում՝ դահուկավազք, արագ սահք, հոկեյ, սնոուբորդ, լեռնադահուկային սպորտ, գեղասահք եւ այլն: Մրցումների ընթացքում մեդալների 57 հավաքածու է խաղարկվում:

ՀԱՅՏՆԻՆԵՐԻ ՆՇԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# ԱՄԵՆԱԹԱՆԿ ՅՈԹ ՄԱՏԱՆԻՆԵՐԸ

**Հայտնի մարդիկ ամեն ինչ անում են մեծ մասշտաբով՝ ներառյալ ամուսնության առաջարկությունը: Կարեւորը, եթե ոչ ամենակարեւորը, նշանադրության մատանին է. որքան մեծ եւ թանկ է ադամանդը, այնքան ազդեցիկ: Նշանադրության ամենաթանկ յոթ մատանիները, որոնք տղամարդիկ նվիրել են իրենց հայտնի սիրելիներին:**

### ՍԵՐԵՆԱ ՈՒԻԼՅԱՄՍԻ 12-ԿԱՐԱՏԱՆՈՑ ՄԱՏԱՆԻՆ

Այսօր արժեքը 3 միլիոն դոլար է:

2016 թվականին Սերենայի ներկայիս ամուսինը եւ Reddit-ի համահիմնադիր Ալեքսիս Օհանյանը նրան ամուսնության առաջարկություն արեց 12-կարատանոց ադամանդե մատանիով: Դրա արժեքը գնահատվում է մոտ 3 մլն դոլար:

### ՄԵԼԱՆՅԱ ԹՐԱՄՓԻ 25-ԿԱՐԱՏԱՆՈՑ ԱԴԱՄԱՆԴԵ ՄԱՏԱՆԻՆ

Այսօր արժեքը 5 միլիոն դոլար է:

Դոնալդ Թրամփը մինչ նախագահ դառնալը Մելանյային Graff ադամանդե մատանի է նվիրել: 25-կարատանոց ադամանդե մատանին այն ժամանակ արժեր 3 միլիոն դոլար, իսկ այժմ ասում են, որ արժե մոտ 5 միլիոն դոլար եւ, իրականում, ամուսնության տարեդարձի նվեր է:

### ԲԵՅՈՆՍԵԻ 18-ԿԱՐԱՏԱՆՈՑ ՄԱՏԱՆԻՆ

Այսօր արժեքը 7 միլիոն դոլար է:

Երբ Ջեյ Զին Բեյոնսեին առաջարկություն արեց, նա հասկացավ, որ պետք է դա անի մեծ շուքով: 2008 թվականին 5 միլիոն դոլար արժողությամբ մատանին 18-կարատանոց զմրուխտով կտրված ադամանդ է: Այն պատրաստված է պլատինից, ինչը նույնպես բարձրացնում է դրա արժեքը: Նախագծված է Լորեյն Շվարցի կողմից: Այժմ դրա արժեքը հասնում է 7 միլիոն դոլարին:

### ՔԻՄ ՔԱՐԴԱՇՅԱՆԻ 15-ԿԱՐԱՏԱՆՈՑ ԱԴԱՄԱՆԴԵ ՄԱՏԱՆԻՆ

Այսօր արժեքը 8 միլիոն դոլար է:

Երբ Քանյե Ուեսթը Քիմ Քարդաշյանին ամուսնության առաջարկ արեց, նա դա արեց ոճային: 8 միլիոն դոլար արժողությամբ մատանին պարունակում էր 15 կարատանոց ադամանդ՝ տեղադրված բարակ պլատինե շրջանակի վրա. այն ցնցող էր: Ցավոք, մատանին քիչ էր մնում 2016 թվականին՝ Փարիզում կողոպուտի ժամանակ դառնար Քիմի մահվան պատճառը:

### ՋԵՆԻՖԵՐ ԼՈՊԵՍԻ ԿԱՆԱՉ ԱԴԱՄԱՆԴԸ՝ 8,5 ԿԱՐԱՏ

Այսօր արժեքը 10 միլիոն դոլար է:

2022 թվականին Բեն Աֆլեքը երկրորդ անգամ ամուսնության առաջարկություն արեց Ջեյ Լոյին՝ Հարի Ուինսթոնի՝ 10 միլիոն դոլար արժողությամբ մատանիով: Քանի որ սա նրա նվիրած երկրորդ մատանին է, այն պետք է հատուկ լիներ: Մատանու քարը 8,5 կարատ է, ինչը չափազանց հազվադեպ է:

### ՄՐԱՅԱ ՔԵՐԻԻ 35-ԿԱՐԱՏԱՆՈՑ ՄԱՏԱՆԻՆ

Այսօր արժեքը 10 միլիոն դոլար է:

Մատանին, որը նրան նվիրել է նրա նախկին նշանած Ջեյմս Փաքերը, արժեցել է 10 միլիոն դոլար: Մի քանի տարի առաջ պարզվեց, որ Քերին վաճառել է մատանին շատ ավելի քիչ գնով, քան սկզբում վճարել էր Փաքերը: Լոս Անջելեսի ոսկերիչը վճարել է մոտ 2 մլն դոլար:

### Cartier-Ի 10-ԿԱՐԱՏԱՆՈՑ ԱԴԱՄԱՆԴ՝ ԳՐԵՅՍ ՔԵԼԻԻ ՀԱՄԱՐ

Այսօր արժեքը 40 միլիոն դոլար է:

1956 թվականին Մոնակոյի արքայազն Ռենյե III-ն ամուսնության առաջարկություն արեց հոլիվուդյան գեղեցկուհի դերասանուհի Գրեյս Քելիին: Նա սիրելիին նվիրեց Cartier-ի 10,47-կարատանոց ադամանդե մատանի: Գնման պահին այն արժեցել է 4 միլիոն դոլար, սակայն այժմ այն գնահատվում է 40 միլիոն դոլար:Ս

ԼՈՒՐԵՐ

## 30 ՕՐ Է ՏՎԵԼ

Սպիտակ տունը դաշնային գործակալություններին 30 օր է տվել TikTok հավելվածը բոլոր սարքերից ջնջելու համար: Չինական հավելվածը անվտանգության խնդիրների պատճառով հայտնվել է Վաշինգտոնի ուշադրության կենտրոնում:

Որոշ գերատեսչություններ՝ ներառյալ Պաշտպանության նախարարությունը, Ներքին անվտանգության նախարարությունը եւ Պետական կառավարումը, արդեն սահմանել են նշված սահմանափակումները: Իշխանությունները կոչ են անում մնացած դաշնային մարմիններին 30 օրվա ընթացքում հետեւել իրենց օրինակին:

Սպիտակ տունն արդեն արգելել է TikTok հավելվածն իր սարքերում:

Կոնգրեսը դեկտեմբերին ընդունել է No TikTok on Government Devices Act օրենքը՝ որպես կառավարության ֆինանսավորման փաթեթի մաս: Օրենսդրությունը թույլ է տալիս TikTok-ի օգտագործումը որոշակի դեպքերում՝ ներառյալ ազգային անվտանգության, իրավապահ մարմինների եւ հետազոտական նպատակներով:

Ակնկալվում է, որ երեքշաբթի Ներկայացուցիչների պալատի հանրապետականները առաջ կմղեն մի օրինագիծ, որն ԱՄՆ նախագահ Ջո Բայդենին իրավունք կտա արգելել TikTok-ը ամբողջ երկրում: Կոնգրեսական Մայք Մաքքոլի առաջարկած օրինագիծը կոչված է շրջանցելու այն խնդիրները, որոնց վարչակազմը կբախվի դատարանում, եթե սկսի պատժամիջոցներ կիրառել չինական հավելվածի դեմ:

Եթե առաջարկն ընդունվի, այն թույլ կտա վարչակազմին արգելել ոչ միայն TikTok-ը, այլեւ ցանկացած ծրագրային ապահովում, որը «սպառնում է ազգային անվտանգությանը»:

## «ԱԼԱՇԿԵՐՏ»-Ը ԳԵՐԱԶԱՆՑԵՑ

Հայաստանի ֆուտբոլի առաջնության 21-րդ տուրի շրջանակներում կայացավ «Լեռնային Արցախ»-«Ալաշկերտ» հանդիպումը:

Վայքի քաղաքային մարզադաշտում կայացած խաղի առաջին կեսում թիմերից եւ ոչ մեկ չիրացրեց իր հնարավորությունը:

Երկրորդ կեսի մեկնարկին՝ 52-րդ րոպեին, «Լեռնային Արցախ»-ն առաջ անցավ հաշվի մեջ: Գոլն իր ակտիվում գրանցեց Օլաոլուվա Օջետունդեն: Հաջորդիվ «Ալաշկերտ»-ին հաջողվեց ոչ միայն հետ բերել կորցրածը, այլ նաեւ հաղթանակի հասնել: Նախ 64-րդ րոպեին Ոսկանյանը հավասարեցրեց հաշվի տարբերությունը, իսկ 78-րդ եւ 82-րդ րոպեներին Եդիգարյանը եւ Ադոնը զարգացրեցին «Ալաշկերտ»-ի առավելությունը:

«Լեռնային Արցախ»-«Ալաշկերտ»՝ 1:3:

Այս տուրի շրջանակներում ավելի վաղ կայացած խաղերում «Արարատ-Արմենիա»-ն հաղթել էր «Արարատ»-ին, «Նոա»-ն՝ ԲԿՄԱ-ին: Հաջորդիվ կկայանան նաեւ «Ուրարտու»-«Վան», «Փյունիկ»-«Շիրակ» հանդիպումները:

● *Մարտի 4-ին Seven Visions Hotels. The Dvin-ում տեղի կունենա GENETIC CODE X VOSKAN KHACHBULAGHYAN & "BERT" ENSEMBLE համերգը: Տոմսերի արժեքը՝ 15000-12000 դրամ: Սկիզբը՝ ժամը 20:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

*Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ*

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Ի՞նչ անել, եթե իմ աշխատավարձը կամ թոշակը արգելադրվել են Հարկադիր ծառայության կողմից:**

*Աստղիկ Հունանյան (68 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Այդ դեպքում անհրաժեշտ է գործատուից՝ աշխատավարձի դեպքում, եւ սոցիալական տարածքային ստորաբաժանումից կենսաթոշակների եւ նպաստների դեպքում վերցնել տեղեկանք, որում նշված կլինի ստացվող եկամուտների չափը, բանկը, որի միջոցով Դուք ստանում եք այդ գումարները, այն հաշվեհամարը, որից փոխանցվում են այդ գումարները: Տեղեկանքը վերցնելուց հետո այն դիմումին կից պետք է ներկայացնեք Դատական ակտերի հարկադիր ծառայության այն բաժին, որտեղ կիրառվել են արգելանքները՝ դիմումով խնդրելով պահումները կատարել միայն սահմանված տոկոսների չափով:

***ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն***

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան հիմքերի առկայության դեպքում կարող է բռնագանձում տարածել անձի եկամտի՝ աշխատավարձի, կամավոր կամ կամավոր կուտակային կենսաթոշակների, կրթաթոշակի եւ մտավոր սեփականության օբյեկտների օգտագործմամբ ստացված վարձատրությունների, պետական կենսաթոշակ-ների վրա: Պետք է հաշվի առնել, որ բռնագանձումը կարող է տարածվել եկամտի միայն որոշակի մասի վրա (ոչ ամբողջությամբ): Մասնավորապես, եթե բռնագանձումը կատարվում է ալիմենտ վճարելու կամ առողջությանը, կերակրողի մահվամբ պատճառված վնասը կամ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելու նպատակով, ապա, վերոնշյալ հիմքերով, ստացվող եկամուտներից (բացառությամբ կենսաթոշակների) բռնագանձումը կարող է տարածվել մինչեւ 75%-ի չափով, իսկ այլ տեսակի պահանջների բավարարման նպատակով կարող է տարածվել մինչեւ 50%-ի չափով. անձի պետական կենսաթոշակներից կարող է բռնագանձվել մինչեւ 30%-ի չափով:

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Զոհված զինծառայողի ընտանիքի անդամ եմ: Ի՞նչ արտոնություններ ունեմ եւ որոնցի՞ց կարող եմ օգտվել:**

*Անի Միսակյան (27 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին եւ հաշմանդամ դարձած զինծառայողներին, որպես դրամական օգնություն, նշանակվում է ամենամսյա դրամական օգնություն՝ պարգեւավճար: Զոհված (մահացած), անհայտ կորած զինծառայողների ընտանիքների անդամների եւ հաշմանդամ դարձած զինծառայողների բուժսպասարկումը եւս գտնվում է պետության հոգածության ներքո: Այս արտոնությունից օգտվելու նպատակով անհրաժեշտ է բժշկական հաստատության ղեկավարությանը տեղեկացնել Ձեր կարգավիճակի մասին՝ նրանց ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթերը: Պետությունը նման կարգավիճակ ունեցող անձանց համար մի շարք արտոնություններ է սահմանել նաեւ գույքահարկի գծով: Մասնավորապես, գույքահարկից ազատվում են ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված (մահացած), ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած եւ օրենքով սահմանված կարգով մահացած ճանաչված անձանց (կամ ընտանիքի անդամներին) պատկանող գույքերը մինչեւ այդ անձանց զավակներից մեկի՝ 18 տարին լրանալը: Գույքահարկի գծով արտոնություններից կարող եք օգտվել՝ համապատասխան փաստաթղթերը ներկայացնելով համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարներին կամ գույքահարկի հավաքագրմամբ զբաղվող բաժիններին:

***ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն***

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Հաշմանդամ դարձած զինծառայողներին պետության կողմից նշանակվում է հաշմանդամության, իսկ զոհված (մահացած), անհայտ կորած զինծառայողների ընտանիքների անդամներին՝ կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակ: Բացի այդ, զոհված (մահացած), անհայտ կորած զինծառայողների ընտանիքների անդամների եւ հաշմանդամ դարձած զինծառայողների երեխաների ամուսնության կամ ընտանիքի անդամի մահվան դեպքում տրվում է 100 հազար դրամ միանվագ դրամական օգնություն, իսկ առանձին դեպքերում՝ դժբախտ պատահարներ, կոմունալ ծառայությունների համար կուտակված պարտքի մարում, գերեզմանի բարեկարգում, ծնունդյան (մահվան) տարեդարձ եւ այլն՝ մինչեւ 100 հազար դրամի չափով, իսկ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների անդամների ստացիոնար բուժման մեջ գտնվելու դեպքում՝ 30.000 դրամի չափով միանվագ դրամական օգնություն:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*

Թուրքական Galatasaray ֆուտբոլային ակումբը ցանկացել է բանակցել Մոսկվայի Dinamo-ի հետ վերջինիս 19-ամյա կիսապաշտպան Արսեն Զախարյանին գնելու նպատակով: Զախարյանը հրաժարվել է թուրքական թիմում հանդես գալու հնարավորությունից: Նա նշել է, որ անձնական պատճառներով է հրաժարվել:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.*

*«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **1.03.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: